Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

(գանգատ թիվ 36549/03)

Երրորդ բաժանմունքի 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ

Կոնվենցիայի 6-րդ հոդված

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

Արդար դատաքննություն

Մեղադրյալից և վկաներից բռնության և սպառնալիքի միջոցով ձեռք բերված վկայությունների օգտագործումը դատարանում: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

1998 թվականին դիմումատուն զորակոչվել է բանակ: 2002 թվականին մեղավոր է ճանաչվել իր ծառայակցի կանխամտածված սպանության համար և դատապարտվել 10 տարի ժամկետով ազատազրկման: Ներպետական դատարանը, ի թիվս այլոց, հիմնվել է դիմումատուի խոստովանական ցուցմունքների և երկու այլ զինվորների վկայությունների վրա՝ միաժամանակ փաստելով, որ նրանց նկատմամբ ճնշումներ են գործադրվել: Ոստիկանության համապատասխան աշխատակիցները մեղավոր են ճանաչվել պաշտոնական լիազորությունների չարաշահման համար և դատապարտվել ազատազրկման: Ներեպետական դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ ոստիկանության աշխատակիցները ծեծել են նրանց ռետինե մահակներով, հարթաշուրթով քաշել են նրանց եղունգները՝ պատճառելով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Սպառնալով շարունակել նմանատիպ դաժան վերաբերմունքը, նրանք ստիպել են դիմումատուին խոստովանել սպանության կատարումը, իսկ մյուս երկուսին տալ համապատասխան վկայություններ: Սպառնացել են նաև դաժան հաշվեհարդար տեսնել, եթե նրանք կիրառված դաժանությունների մասին հայտնեն վերադաս մարմիններին: Հղում անելով դատարանի վերոհիշյալ եզրահանգումներին՝ դիմումատուն անհաջող փորձեր է արել բողոքարկելու իր դատավճիռը:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

Դիմումատուին հարկադրել են տալ խոստովանական, իսկ մյուս վկաներին՝ դիմումատուի մեղավորությունը փաստող ցուցմունքներ: Ճնշումների արդյունքում ձեռք բերված վկայությունները օգտագործվել են որպես ապացույց՝ չնայած այն հանգամանքին, որ ոստիկանության համապատասխան աշխատակիցների նկատմամբ զուգահեռ ընթացող դատավարության ընթացքում արդեն հաստատվել էր դաժան վերաբերմունքի կիրառման փաստը: Ներպետական դատարանները նշված վկայությունների օգտագործումը արդարացրել են այն հանգամանքով, որ դիմումատուն խոստովանական ցուցմունքները տվել էր հետաքննիչին և ոչ թե ոստիկանության աշխատակիցներին, ինչպես նաև նրանով, որ վկաները համապատասխան ցուցմունքները վերահաստատել են ավելի ուշ՝ առերեսումների և դատական նիստի ժամանակ: Եվրոպական դատարանը, այնուամենայնիվ, չի բավարարվել այդ փաստարկներով: Դաատարանն արձանագրել է, որ երբ կա ակնառու ապացույց առ այն, որ անձը ենթարկվել է դաժան վերաբերմունքի, ներառյալ ֆիզիկական բռնության և սպառնալիքների, ապա այն փաստը, որ տվյալ անձն իր ցուցմունքները տվել է իշխանության այլ մարմնի, քան այն, որը պատասխանատու է եղել նման դաժան վերաբերմունքի համար, չպետք է մեխանիկորեն հանգեցնի եզրահանգման, որ նման խոստովանական ցուցմունքները և վկայությունները կիրառված չեն եղել բռնությունների և տվյալ անձանց՝ հնարավոր նոր բռնություններից ունեցած երկյուղի հետևանքով: Ներպետական դատարանի տրամադրության տակ եղել են բավարար ապացույցներ, որ վկաներին շարունակաբար սպառնացել են հետագա խոշտանգումներով և հաշվեհարդարով: Ավելին, այն փաստը, որ նրանք դեռևս գտնվել են զինվորական ծառայության մեջ, աներկբայորեն ավելացրել է նրանց վախը և ազդել նրանց վկայությունների վրա: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նրանց ցուցմունքները հիմնովին փոխվել են զորացրվելուց հետո: Հետևաբար, վերոհիշյալ ժամանակահատվածի ընթացքում նրանց տված ցուցմունքների հավաստիությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս, և բոլոր դեպքերում դրանց վրա չէր կարելի հիմնվել:

Անկախ այն հանգամանքից, թե բոնությամբ և սպառնալիքի միջոցով ձեռք բերված ապացույցները ինչ ազդեցություն են ունեցել դիմումատուի քրեական գործի ելքի վրա, դրանց օգտագործումը դատավարությունն իր ամբողջության մեջ անարդար է դարձրել:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):